


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻՈՒ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА

ԵՐՎԱՐԴ ՄԿՐՏՅՉԵՎԻ
ԶՐԲՈՒՅՑԱՆ
ԷԴՎԱՐԴ ՄԿՐՏՅՉԵՎԻЧ
ДЖРБАШЯН

ԵՐԵՎԱՆ





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА
МАТЕРИАЛЫ К БИОБИБЛИОГРАФИИ УЧЕНЫХ АРМЕНИИ

№ 51

ЭДВАРД МКРТЫЧЕВИЧ
ДЖРБАШЯН

Вступительная статья А. К. ЕГИАЗАРЯНА, В. А. КИРАКОСЯНА
Библиография составлена Р. А. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН АРМЕНИИ
ЕРЕВАН 1995

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

№ 51

ԵԴՎԱՐԴ ՄԿՐՏՉԻ ԶՐԲԱՇՑԱՆ

Ներաժականը Ա. Կ. Եղիազարյանի, Վ. Ա. Կիրակոսյանի
Մատենագիտությունը կազմել է Ռ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱ. «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն

1995

Տպագրվում է Հայաստանի ԳԱԱ
փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի
բյուրոյի երաշխավորությամբ և ֆունդամենտալ գիտական
գրադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն կ ո լ ե զ ի ա ս

Ս. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ (նախագահ), Հ. Գ. ԹԱԿԱՎԱԶՅԱՆ,
Գ. Բ. ՂԱՐԻԲՅԱՆՅԱՆ, Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Պատասխանատու խմբագիր՝ Ա. Կ. ԵԳԻԱԶԱՐՅԱՆ

Печатается по рекомендации бюро Отделения философии и
филологии НАН Армении и по решению ученого совета
фундаментальной научной библиотеки НАН Армении.

Редакционная коллегия

С. А. ВАРДАНЯН (председатель), О. Г. БАКЛАВАДЖЯН,
Г. Б. ГАРИБДЖАНЯН, Р. М. МАРТИРОСЯН, В. С. НАЛБАНДЯН.

Ответственный редактор: А. К. ЕГИАЗАРЯН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷԴՎԱՐԴ ՄԿՐՏՉԻ ԶՐԲԱՇՅԱՆԻ
ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

- Էդվարդ Մկրտչի Զրբաշյանը ծնվել է 1923 թ. սեպտեմբերի 24-ին, Երևանում, մեծ եղեռնի ժամանակ Վանից գաղթած ընտանիքում։
1931—1941 թթ. սովորել և ավարտել է Երևանի Ա. Ս. Բուրնովի անվան (1937-ից՝ Եղիշ Խուաթավելու անվան) միջնակարգ դպրոցը։
1941—1945 թթ. ծառայել է Խորհրդային Միության զինված ուժերի շարքերում։
1944 թ. պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով և մեդալներով։
1945—1950 թթ. Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժնի ուսանող։
1950—1953 թթ. համալսարանի ասպիրանտ «Գրականության տեսություն» մասնագիտությամբ։
1950 թ. առ այսօր համալսարանի բանասիրական ֆակուլտետի դասախոս է (գրականության տեսության, գեղագիտության, հայ գրականության պատմության և այլ առարկաների)։
1953—1954 թթ. «Գրական թերթի» պատասխանատու խմբագրի տեղակալ։
1953—1962 թթ. նույն թերթի խմբագրական կոլեգիայի անդամ։
1954 թ. շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան «Պոեմի ժամանակակիրական գրականության մեջ» աշխատության համար։
1957 թ. Հայաստանի գրողների միության անդամ։
1961—1962 թթ. «Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խըմբագիր։
1961—1992 թթ. նույն հանդեսի (հետագայում՝ «Նորք») խմբագրական կոլեգիայի անդամ։
1965 թ. շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան «Թումանյանի պոեմները» աշխատության համար։

- 1966—1970 թթ. Հայաստանի ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գրականության տեսության նորաբաց բաժնի վարիչ:
- 1967 թ. շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:
- 1967—1977 թթ. «Բանբեր Երևանի համալսարանի» (Հասարակական գիտություններ) հանդեսի գլխավոր խմբագիր: Նույն հանդեսի խմբագրական կողեգիայի անդամ առ այսօր:
- 1970 թ. շնորհվել է Հանրապետության գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:
- 1971 թ. ընտրվել է Հայաստանի գրողների միության նախագահության անդամ:
- 1972—1985 թթ. Երևանի պետական համալսարանի գրականության տեսության և գեղագիտության, ապա արտասահմանյան գրականության և գրականության տեսության ամբիոնի վարիչ:
- 1974 թ. ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ:
- շնորհվել է Հայաստանի պետական մրցանակ «Գրականության տեսություն» բուհական դասագրքի համար:
- 1977 թ. առ այսօր Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն: Միաժամանակ ակադեմիայի փիլիսոփայության և բանասիրության բաժնության ակադեմիկոս բարտուղարի տեղակալ:
- 1978 թ. առ այսօր ՀԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական կոլեգիայի անդամ:
- 1979 թ. մասնակցել է Համեմատական գրականագիտության միջազգային ասոցիացիայի 9-րդ կոնֆերանսին (Ավստրիայի Ինսբրուք քաղաքում):
- 1980 թ. շնորհվել է Հայաստանի պետական մրցանակ «Հայ նոր գրականության պատմության» 5-հատորյակի ստեղծմանը մասնակցելու համար:
- 1982 թ. ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:
- 1983 թ. ծննդյան 60-ամյակի առթիվ պարգևատրվել է Աշխատանքային կարմիր գրոշի շքանշանով:
- 1985 թ. պարգևատրվել է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով:
- 1987 թ. առ այսօր Հայաստանի ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության

ինստիտուտում Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության և հրատարակությունների գիտահետազոտական խմբի ղեկավար:

1988 թ. մասնակցել է Միջազգային հայագիտական ընկերության 3-րդ համաժողովին (Եվրյացարիայի Ֆրիրուր բաղաքում):

1994 թ. ընտրվել է ՀԱԱ նախագահության անդամ, բանասիրության և արվեստագիտության պրոբլեմային գիտական խորհրդի նախագահ և ակադեմիայի հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս բարտուղարի տեղակալ:

ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ АКАДЕМИКА НАН РА ЭДВАРДА МКРТЫЧЕВИЧА ДЖРБАШЯНА

Эдвард Мкртычевич Джрбашян родился 24 сентября 1923 г. в Ереване, в семье, переселившейся во время геноцида армян из Вана.

1931—1941 гг. Учился и окончил Ереванскую среднюю школу им. А. С. Бубнова (с 1937 г. школа им. Шота Руставели).

1941—1945 гг. Служил в рядах Вооруженных Сил Советского Союза.

1944 г. Награжден орденом Красной Звезды и медалями.

1945—1950 гг. Студент армянского отделения филологического факультета Ереванского государственного университета.

1950—1953 гг. Аспирант университета по специальности «Теория литературы».

1950 г.—н/вр. Преподаватель филологического факультета Ереванского университета (теория литературы, эстетика, историч армянской литературы и другие предметы).

1953—1954 гг. Заместитель ответственного редактора газеты «Гракан терт».

1953—1962 гг. Член редакционной коллегии той же газеты.

1954 г. Присуждена ученая степень кандидата филологических наук за диссертационную работу «Жанр поэмы в армянской советской литературе».

1957 г. Член Союза писателей Армении.

1961—1962 гг. Главный редактор журнала «Советакан граканутюн» («Советская литература»).

1961—1992 гг. Член редколлегии того же журнала (впоследствии —«Норк»).

- 1965 г. Присуждена ученая степень доктора филологических наук за диссертационную работу «Поэмы Туманяна».
- 1966—1970 гг. Заведующий отделом теории литературы Института литературы им. М. А. Абегяна Академии наук Армении.
- 1967 г. Присвоено ученое звание профессора.
- 1967—1977 гг. Главный редактор журнала «Вестник Ереванского университета» (общественные науки). Член редколлегии того же журнала по настоящее время.
- 1970 г. Присвоено почетное звание Заслуженного деятеля науки республики.
- 1971 г. Избран членом президиума Союза писателей Армении.
- 1972—1985 гг. Заведующий кафедрой теории литературы и эстетики, затем кафедрой зарубежной литературы и теории литературы Ереванского государственного университета.
- 1974 г. Избран членом-корреспондентом Академии наук Армении. Присуждена Государственная премия Армении за вузовский учебник «Теория литературы».
- 1977 г.—н/вр. Директор Института литературы им. М. Абегяна Национальной академии наук Республики Армения. Одновременно—заместитель академика-секретаря отделения философии и филологии.
- 1978 г.—н/вр. Член редколлегии «Историко-филологического журнала» НАН.
- 1979 г. Участник IX конгресса Международной ассоциации сравнительного литературоведения в городе Инсбург (Австрия).
- 1980 г. Присуждена Государственная премия Армении за участие в создании 5-томной «Истории новой армянской литературы».
- 1982 г. Избран действительным членом Академии наук Армянской ССР.
- 1983 г. Награжден орденом Трудового Красного Знамени в связи с 60-летием со дня рождения.
- 1985 г. Награжден орденом Отечественной войны первой степени.

- 1987 г.—н/вр. Руководитель научно-исследовательской группы по изучению и изданию литературного наследия Ованеса Туманяна.
- 1988 г. Участник 3-й конференции Международного арменоведческого общества в городе Фрибур (Швейцария).
- 1994 г. Избран членом президиума НАН РА, председателем проблемного научного совета по филологии и искусствоведению, заместителем академика-секретаря отделения гуманитарных наук.

ԿՅԱՆՔԻ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

1950-ական թթ. կեսերից հրապարակ իշավ հայ քննադատների և գրականագետների մի սերունդ, որին շատ կարելուր դեր էր վիճակված՝ լճացումից հանել գրականագիտական, որոշ իմաստով նաև ողջ հասարակագիտական միտքը:

Էդվարդ Մկրտչի Զրբաշյանը այդ սերնդից էր: Բայց մինչ այդ նա անցել էր բավական դժվար մի ճանապարհ: Ծնվել է տոռմիկ վանեցի Զրբաշյանների ընտանիքում [այդ ընտանիքը շատ գործիշներ է տվել հայ գիտությանն ու մշակույթին], որը 1915-ին փախել էր Վանից այն հույսով, որ ամեն ինչ կհանդարտվի, և կվերադառնան իրենց քաղաքը: Հետո, երբ հույսերը լքացան, Զրբաշյանները հիմնավորվեցին Երևանում: Վանեցիների ավանդական սերը գրի, գրրականության, մշակույթի նկատմամբ Զրբաշյանների ընտանիքում մեծ դեր է խաղացել: Մասնավորապես մայրը հիանալի իմացել է արևմտահայ բանաստեղծությունը և այդ սիրով տոգորել է իր զավակներին:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց անմիջապես հետո ըսկըսվում է Հայրենական պատերազմը, և Զրբաշյանը զորակուվում է բանակ: Մարտնչել է Հյուսիսային Կովկասում, 3-րդ Բելոռուսական ռազմաճակատում, պարգևատրվել է մարտական շքանշաններով և մեդալներով: Մանր վիրավոր-

վել է Արևելյան Պրուսիայում 1944 թ. հոկտեմբերին: Երկար ամիսներ ապաքինվելուց հետո վերադառնում է տուն արդեն պատերազմի ավարտից հետո: Ավարտում է համալսարանի բանասիրական ֆակուլտետը և մնում համալսարանում դասավանդելու: Դրանից հետո նրա կյանքը անխզելիորեն կապված է համալսարանի հետ. արդեն ավելի քան շորս տասնամյակ նա դասախոսություններ է կարդում բանասիրական ֆակուլտետի ուսանողների համար (գրականության տեսություն, գեղագիտական ուսմունքներ, հայ նոր գրականության պատմություն, իսկ ֆակուլտետի ուսական բաժնում՝ ամբողջ հայ գրականության դասընթաց): Երեկի այսօր Հայաստանում քիչ կատոնվեն դպրոցներ, որտեղ չեն աշխատում Զրբացյանի ուսանողները: Բացի այդ, նա հայ գրականության դասընթացներ է վարել Թբիլիսիի, Կիւի, Վիլնյուսի և Տարտուի համալսարաններում:

Էդ. Զրբացյանն աշխատել է գրական և գիտական մամուլում (եղել է «Գրական թերթի» խմբագրի տեղակալ, «Սովետական գրականություն» ամսագրի և «Բանքեր Երեվանի համալսարանի» հասարակագիտական հանդեսի գլխավոր խմբագիր): Բայց գլխավորը նրա համար եղել են դասավանդումը համալսարանում և գրականագիտական-հետազոտական աշխատանքը:

Այս բնագավառուներում են ակադեմիկոս Էդվարդ Զըրբացյանի (ՀՀ ԳԱԱ իսկական անդամ է ընտրվել 1982 թ.) մեծագույն ծառայությունները հայրենի գրականությանն ու գիտությանը: Նրա հետաքրքրություններն ընդգրկում են գրականագիտության տարրեր բաժիններ: Գրականության պատմության մեջ նա ամենից շատ գրապուրվել է XIX դարի

վերջի և XX դարի սկզբի գրական պրոցեսով։ Այս ասպարեզում նրա աշխատանքների ամփոփումը եղան «Հայ նոր գրականության պատմության» 5-րդ հատորի համապատասխան գլուխները, որոնցում լուսաբանված է ժամանակի մըշակութային կյանքը, գրական հոսանքների ու ոճերի աննախադեպ բազմազանությունը։ Այս շրջանը իր առանձնահատկություններով պահանջում է խոր և ուշադիր հայացք. այն նման չէ XIX դարի գրական զարգացման դասական պատկերին. այստեղ դժվար է գտնել գրական դպրոցների ու ոճերի հատակ սահմանները։ Բայց հենց սրանով էլ այդ տարիները առավել հետաքրքրական են դառնում գիտության համար։ Պատահական չէ, որ հայ նորագույն գրականության, հատկապես բանաստեղծության ժաղկումը կապվում է այս թվականների հետ։ Գրականությունը քննելով ժամանակի հասարակական մտքի լայն համատեքստում՝ էդ. Զըրքաշյանը բացահայտեց այդ հետաքրքրագույն շրջանի ինքնատիպ գծերը՝ առաջին անգամ տալով ժամանակաշրջանի ամբողջական բնութագիրը։

Խնդիրը միայն ոճերի ու դպրոցների բազմազանությունը չէր. այդ հատուկ էր, ասենք, նաև ոռա գրականությանը։ Հայ գրականությունն ուներ մի ուրիշ առանձնահատկություն, որ ընդգծվեց հատկապես հիշյալ ժամանակաշրջանում։ Այդ առանձնահատկությունը Զըրքաշյանը բնութագրում է իրեն զարգացման յուրատեսակ «ուշացածություն»՝ պայմանավորված ժողովրդի պատմական զարգացման յուրօրինակ գծերով։ Դա մի հարց է, որին ուշադրություն է դարձրել դեռևս Վահան Տերյանը, իր հայտնի դասախոսության մեջ։ Զըրքաշյանը «Հայ նոր գրականության պատմության» 5-րդ հատորի ներածության մեջ և քննադատությանը նվիրված

բաժնում տալիս է այդ երեսվթի և նրա հետ առնվվող բազմազան գրական-գեղարվեստական իրողությունների հիմնավոր քննությունը:

Դարասկզբի հեղինակներից գիտնականը հետաքրքրական աշխատություններ է գրել Ավետիք Խսահակյանի, Վահան Տերյանի, Միսաք Մեծարենցի մասին (Մեծարենցին նվիրված մենագրությունը երկու հրատարակություն է ունեցել), որոնք բոլորն էլ այսօր շարունակում են գրավել մասնագետների ուշադրությունը: Խուսափելով արտաքին էֆեկտներից, գրականագիտական վաղանցուկ հրապուրանքներից՝ Զրբաշյանն իր լավագույն աշխատություններում կատարում է հիմնարար հետևություններ, որոնք այնուհետև դժվար չերջանցել: Իրրև օրինակ, հիշենք Ավ. Խսահակյանին նըմիրված հետազոտությունները, որոնք նվիրված են բանաստեղծի քնարական հերոսի, նրա յուրացրած գեղարվեստական ավանդույթների և ոռմանտիկական մեթոդի խնդիրներին:

Բայց, իհարկե, ամենից խոր և ամենից տևական նազրաղվել է Հովհաննես Թումանյանի ստեղծագործության քննությամբ: Առհասարակ, կարելի է պնդել, որ ակադեմիկոս Զրբաշյանի գիտական գործունեության բարձրակետը Թումանյանի ստեղծագործության հետազոտությունն է: Նա աշխատություններ է հրապարակել Թումանյանի մասին գեռես ուսանողական տարիներին: 1964-ին հրատարակվեց նրա ծավալուն մենագրությունը՝ «Թումանյանի պոեմները» (որը և եղավ նրա դոկտորական դիսերտացիան): Այս գործը առանձնանում է ողջ թումանյանագիտության մեջ իր համակողմանի ու հանգամանալից բնույթով, եզրակացությունների ճշգրտությամբ ու հիմնավորվածությամբ: Զըր-

բաշլանը այստեղ առաջ քաշեց աղգային մեծագույն բանաստեղծի ստեղծագործության մի շարք հիմնախնդիրներ, առաջին անգամ հիմնավոր քննության առարկա դարձրեց Թումանյանի արվեստի կարևորագույն հարցերը՝ հիմք ըստեղծելով Թումանյանի ժառանգության հետագա ուսումնասիրության համար:

Այս աշխատության մի շարք դրույթներ հիմք են տալիս այն շրջադարձային համարելու թումանյանագիտության մեջ։ Այդ վերաբերում է, նախ և առաջ, Թումանյանի կերտած բնավորությունների մեկնաբանությանը։ Զրբաշյանը նրանց շի դիտում սոսկ իրեն նահապետական իրականության զոհեր (ինչը որ շատ տարածված կարծիք էր), այլ իրեն բարոյական բարձր արժեքների կրողներ, և, բնականաբար, նահապետական իրականության մեկնաբանությունը ևս այլ երանգ է ստանում։ Անուշը և Սարոն ոչ միայն նահապետական իրականության զոհերն էին, այլև այդ նույն իրականության ծնունդը, արդյունքը։ Նրանք, իրեն անհատականություններ, ձեւավորվել էին նահապետականության մթնոլորտում, և հենց դրա համար էլ Թումանյանի իդեալների կրողներն էին. Թումանյանը նրանց հակադրում էր բուժության ապամարդկայնացնող իրականությանը, որի արժեքները մերժում էր։

Առհասարակ, անհատի և ժողովրդական-համայնական տարերքի կապի դրույթը Զրբաշյանի այդ աշխատության կարևորագույն ձեռքբերումներից մեկն էր։ Այդ կապի վերլուծությունը ճանապարհ էր բացում մեր մեծ բանաստեղծի ստեղծագործության խոր մեկնաբանության համար։

«Թումանյանի պոեմները» գրքում էդ. Զրբաշյանը առաջ է քաշում նաև մի ուրիշ կարևոր դրույթ՝ Թումանյանի

ոեալիզմի համադրականությունը։ Այդպես է գրականագետը բնորդշում թումանյանի գեղարվեստական մեթոդի ինքնատիպությունը՝ դրանով իսկ նրան առանձնացնելով XIX դարի քննադատական ոեալիզմի ընդհանուր հոսանքից (թեև ինքը հակված է, մեթոդի առանձնահատկություններով հանդերձ, թումանյանին ևս համարել լայն առումով քըն-նադատական ոեալիզմի ներկայացուցիչ)։ Պատահական չէ, որ «Թումանյանի պոեմները» հետագայում վերահրատարակվեց ոչ մեծ շտկումներով ու փոփոխություններով։

Այս մենագրությամբ, իհարկե, չի սպառվում ջրբաշյանի թումանյանագիտական աշխատությունների ցանկը։ Տարբեր տարիների ընթացքում նա գրել է հետազոտություններ թումանյանի բալլագների, արձակի, քնարերգության տարբեր խնդիրների մասին, որոնք հետագայում ամփոփվեցին «Թումանյան. Ստեղծագործության պրոբլեմներ» գրքի մեջ։ Վերջին տարիներին ջրբաշյանն ավարտեց նաև մի այլ թումանյանագիտական մենագրություն՝ «Թումանյանը և հայ գրականության ավանդույթները», որը լույս տեսավ բանաստեղծի ծննդյան 125-ամյակի օրերին։ Այս գրքով ամբողջացավ մի յուրօրինակ թումանյանական եռագրություն ստեղծելու մտահղացումը, որի իրականացումը շատ տարիների ջանքեր է պահանջել։

Այս կապակցությամբ պետք է ասել, որ հայ գրականագիտության մեջ այսպիսի տևական հետաքրքրությունը որևէ հեղինակի նկատմամբ այնքան էլ տարածված չէ, բայց դա շատ բնորոշ է ջրբաշյանի ոճին և մտածողությանը։ Ավելորդ է ասել, որ այս երրորդ գործից հետո էլ նա լի հեռանում թումանյանից։ գրվում են նոր աշխատություններ, հոդվածներ (նոր-նոր լույս տեսան թումանյանի ստեղծագործու-

թյան ամենավերջին էջերին, ինչպես նաև Թումանյանի և Տերյանի ստեղծագործության բանասիրական խնդիրներին նվիրված Շողվածներ): Զրբաշյանը ղեկավարում է Թումանյանի երկերի նոր ակադեմիական հրատարակության աշխատանքը, մի շարք հատորների կազմողն է և մեկնարանությունների (կոմենտարների) հեղինակը: Ժամանակին (1960-ական թթ. սկզբին) նրա անմիջական մասնակցությամբ է հիմնադրվել «Թումանյան. Ուսումնասիրություններ» և հրապարակումներ» մատենաշարը: Լույս են տեսել այդ մատենաշարի չորս գրքերը, պատրաստ է հինգերորդը, պատրաստվում են հաջորդները: Այսօր էլ Զրբաշյանը մատենաշարի պատասխանատու խմբագիրներից և ամենաակտիվ հեղինակներից մեկն է:

Չմոռանանք, սակայն, որ Զրբաշյանի հետաքրքրությունների սահմաններում են հայ նոր և նորագույն գրականության ուրիշ ականավոր դեմքեր ևս: Անհրաժեշտ է հիշատակել, օրինակ, Միքայել Նալբանդյանին նվիրված նրա ուսումնասիրությունները, որոնք հրատարակվել են առանձին գրքով («Միքայել Նալբանդյանը և արդիականությունը»): Այս գրքի մեջ ամփոփված աշխատանքներից իրենց բերած նոր մոտեցումներով ուշագրավ են հատկապես «Նալբանդյանի արձակի գեղարվեստական համակարգը» և «Ուղիղ ճանապարհի մեծ որոնողը», ուր քննվում են մեծ գրող-հրայարակախոսի անձնավորության բնորոշ գծերը: Բացի այդ, էղ. Զրբաշյանի աշխատություններից մեկը նվիրված է Ղեոնդ Ալիշանի «Նահապետի երգերի» համակողմանի քըննությանը և եվրոպական օսիանիզմի հետ նրա կապերի բացահայտմանը: Առանձին «փոքր մենագրություններ» են Գարրիել Սունդուկյանի «Վարինկի վեշերը» պատմվածքին,

Ե. Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությանը և Ա. Բակունցի «Խաչատուր Արովյան» անավարտվեպին նվիրված հետազոտությունները։ Զրբաշյանի լավագույն գրքերից մեկը կոչվում է «Չորս գագաթ» (տպագրվել է նաև ռուսերեն Մոսկվայում) և նվիրված է Թումանյանի, Խաչակյանի, Տերյանի և Զարենցի ժառանգությանը։

Դրականագիտության մյուս կարևոր բնագավառը, որտեղ Զրբաշյանը մեծ ավանդ ունի, տաղաշափությունն է։ Արեղյանի հայտնի աշխատությունից («Հայոց լեզվի տաղաշափություն») հետո տաղաշափության հարցերը հայ գրականագիտության ուշադրությունից դուրս էին մնացել։ Զրբաշյանը վերականգնեց հետաքրքրությունը այդ խիստ ինքնատիպ ասպարեզի նկատմամբ։ Իր իսկ խոստովանությամբ, նրա հետաքրքրությունը տաղաշափության հանդեպ ծնվել է Արեղյանի աշխատության ազդեցությամբ։ Բայց նա անվերապահորեն շհետևեց մեր մեծ բանասերին, մերժեց նրա տեսությունը։ Հայ տաղաշափությանը՝ վանկա-շեշտական բնույթի մասին և հիմնավորեց նրա վանկականությունը։

Հայկական տաղաշափության մասին նրա տեսակետները շարադրված են «Լեզու և ոտանավոր» ուսումնասիրության մեջ։ Դրանից հետո արդեն տաղաշափությանը նվիրված աշխատություններ գրեցին նոր սերնդի գրականագետներ։ Ինքը՝ Զրբաշյանը այսօր էլ շարունակում է ըզրադպել նաև այս բնագավառով։ Վերջին տարիների նրա աշխատությունների մեջ են Տերյանի և Թումանյանի տաղաշափությանը վերաբերող գործերը։ Տերյանի տաղաշափությունը լուսաբանող նրա աշխատությունը («Վահան Տերյանի տաղաշափական համակարգը») լույս տեսավ 1995-ին։ Այս ուսումնասիրությունը առաջինն է հայ գրա-

կանագիտության մեջ՝ նվիրված մեկ բանաստեղծի տաղաշափական համակարգի ամբողջական քննությանը:

Առհասարակ, Զրբաշյանը մեր այն հազվադեպ գըրականագետներից է, որը մասնագիտական հետաքրքրություն է հանդես բերում գրականության տեսության խնդիրների նկատմամբ։ Համալսարանում տարիներ շարունակ նա կարդացել է ընդհանուր և մասնավոր տեսական դասընթացներ, կազմակերպել է գրականության տեսության և գեղագիտության (հետագայում՝ գրականության տեսության և արտասահմանյան գրականության) ամբիոնը։ Դրանից առաջ նա Գրականության ինստիտուտում հիմնադրել և մի քանի տարի ղեկավարել է տեսության բաժինը։ Նա հեղինակն է «Գրականության տեսության»՝ առաջին բուհական հայերեն դասագրքի (1961—1980 թվականներին այդ գիրքն ունեցել է հինգ հրատարակություն), որով բանասերների շատ սերունդներ են կրթվել։ Այդ դասագրքում արտացոլված է գրական-տեսական մտքի մի այնպիսի հարստություն, որը գեռ երկար կարող է սնունդ տալ ուսանողներին և մասնագետներին։ Վերջին տարիներին Զրբաշյանը գրեց նաև «Գրականագիտություն. տեսական դասընթաց» դպրոցական դասագիրքը, որն իր կուռ կառուցվածքով և շարադրանքի պարզությամբ անփոխարինելի դեր կարող է կատարել ժամանակակից դպրոցում։

Զրբաշյանի տեսական հետաքրքրությունները նշված աշխատություններով չեն սպառվում։ Նրա հրատարակած բազմաթիվ մենագրությունների և ժողովածուների մեջ արծարծվում են գրականագիտական-տեսական բազմազան խնդիրներ։ Այս առումով առանձնանում են հատկապես «Պոետի-

կայի հարցեր» և «Գեղագիտություն» և գրականություն» ժողովածուները, որոնց մեջ քննվում են գրական մեթոդների, ժանրերի, տաղաշափության և այլ հարցեր։ Գրականության պատմության խնդիրներին էլ Զրբաշյանը նայում է տեսաբանի հայացքով։ Բնորոշ է, որ Թումանյանի ստեղծագործությունը նա հետազոտել է ըստ ժանրերի՝ պոեմներ, բալլագներ, արձակ։ Իսկ առաջին ծավալուն հետազոտությունը դարձյալ կապված էր ժանրի հետ՝ «Պոեմի ժանրը սովետահայ գրականության մեջ»։

Գերազանցապես տեսական-տիպարանական պլանով է նա քննել նաև գրական առնչությունների խնդիրները, որոնք եղել են նրա նախասիրած թեմաների շարքում։ Այդ հարցերին են նվիրված նրա ուսումնասիրությունները Պուշկին—Թումանյան, Պուշկին—Չարենց, Լերմոնտով—Տերյան, եվրոպական ուսմանտիզմ—Իսահակյան և այլ զուգահեռների շուրջ։ Նրա նախաձեռնությամբ են աշխատանքներ սկսվել հայ գրականության պատմագործառական լուսաբանության ուղղությամբ, որի արդյունքը եղավ 1989 թ. հրատարակված համապատասխան ժողովածուն՝ նրա խմբագրությամբ և առաջարանով։

Էդ. Զրբաշյանը հետևում է գրականագիտության ավանդական ուղղություններին։ Նրան շատ բան են տվել XX դարի ուսա գրականագիտության և բանասիրության խոշորագույն դեմքերը՝ Վ. Ժիրմունսկին, Բ. Տոմաշևսկին, Գ. Գուկովսկին, Լ. Տիմոֆեևը և ուրիշներ։ Գերազանց գիտի հայ գրականագիտությունը, որի լավագույն ավանդների շարունակողն է ու զարգացնողը։

Ուսանողական տարիներին նրա վրա խոր տպավորություն են թողել Արսեն Տերտերյանի և Մկրտիչ Մկրյանի

դասախոսությունները հայ նոր գրականության վերաբերյալ, որոնց նա միշտ հիշում է երախտագիտությամբ:

Գրականագիտության մասնավոր խնդիրներին (օրինակ, տաղալափությանը) նվիրված աշխատությունները Զրբաշ-յանի վաստակի մի կարևոր մասն են կազմում: Բայց գրա-կանագետի նրա հայացքի էությունը պայմանավորված է գրականության և կյանքի կապի, գրականության հասա-րակական արժեքի և պայմանավորվածության հիմնարար դրույթներով: Այդ առումով բնորոշ են նրա երկու գրեթե վերնագրերը՝ «Աշխարհայացք» և վարպետություն», «Գրո-դր և ժողովուրդը»: Ունի մի հատկանիշ, որ շատ կարևոր է և՝ գիտության մեջ, և՝ հասարակական կյանքում, և՝ մարդկային հարաբերությունների մեջ՝ կայուն սկզբունք-ների և համոզմունքների մարդ է և գիտնական: Պատկե-րացումների և ըմբռնումների մեջ տարիների ընթացքում, անկասկած, շատ բան սրբագրվել է ու զարգացել: Բայց իր գլխավոր գաղափարներից երբեք չի հրաժարվել:

Եվ, վերջապես, Զրբաշյանը գիտության լավագույն կազ-մակերպիչներից մեկն է հանրապետությունում: Արդեն ա-սացինք, որ նա ժամանակին գիտական ստորաբաժանում-ներ է հիմնել համալսարանում և գրականության ինստի-տուտում, կատարել է խմբագրական աշխատանք: 1977-ին Զրբաշյանը նշանակվում է Մանուկ Աբեղյանի անվան գրա-կանության ինստիտուտի տնօրեն: Անցած մոտ երկու տասնամյակներում ինստիտուտում ստեղծվել են բազմա-թիվ աշխատություններ հայ գրականության պատմության տարբեր խնդիրների շուրջ, հրատարակվել են դասականնե-րի բազմաթիվ հատորներ: Ինստիտուտը, հաղթահարելով

բազմաթիվ դժվարություններ, իր մեծ ներդրումն է կատարում մեր ժողովրդի հոգևոր արժեքների ուսումնասիրության գործում։ Զրբաշյանը, շարունակելով ակտիվ գիտական-հետազոտական աշխատանքը, միաժամանակ հմտորեն ուղղություն է տալիս ողջ գիտական անձնակազմի աշխատանքին, անձնակազմ, որի մեջ են անուն ու վաստակ ունեցող շատ գիտնականներ։ Ինքն է նախաձեռնողը թեմաների զգալի մասի և դասականների հրատարակությունների։

Էդ. Զրբաշյանը բազմիցս ներկայացրել է հայ գրականագիտությունը միջազգային գիտաժողովներում, զեկուցումներով հանդես է եկել Ա. Մ. Գորկու անվան Համաշխարհային գրականության ինստիտուտում (Մոսկվա), Ռուս գրականության ինստիտուտում՝ Պուշկինյան տանը (Մանկու Պետերբուրգ), Համեմատական գրականագիտության միջազգային ասոցիացիայի 9-րդ կոնֆերանսում (Ավստրիա, 1979), Միջազգային հայագիտական ընկերության 3-րդ կոնֆերանսում (Շվեյցարիա, 1988) և այլն։ Մեծ զանքեր է թափել Հայ միջնադարյան գրականությանը նվիրված միջազգային գիտաժողով հրավիրելու համար (Երևան, 1986)։

Կարելի է շընդունել կամ վիճարկել նրա այս կամ այն տեսակետը։ Բայց դա մարդկային հարաբերություններում բարդություններ չի առաջացնում։ Այս գիծը, որ այնքան էլ հաճախ չենք գտնում գիտական մեծ կոլեկտիվների ղեկավարների մեջ, հեշտացնում է նրա հարաբերությունները երիտասարդության հետ։ Ուսանողները նրա մասին պահում են ամենաշերմ հիշողություններ։ Ղեկավարել է տասնյակ դիսերտացիաներ, ընդդիմախոս է եղել շատե-

րին, այս կամ այն կերպ նպաստելով նրանց մուտքին գիտության մեջ:

Այս վերջին ծանր տարիներին էլ եղարդ Զրբաշյանը շարունակում է աշխատել նախանձելի տքնանքով, մեկը մյուսի ետևից ասպարեզ բերելով նորանոր աշխատություններ, առաջին հերթին իր ամենասիրած հեղինակների՝ Թումանյանի և Տերյանի մասին։ Կատարյալ նվիրում հայ գըրականությանն ու գրականագիտությանը՝ երևի այս է նրա անցած ճանապարհի ամենաճշմարիտ բնութագիրը։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ա. ԵՂԻՍԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

КРАТКИЙ ОЧЕРК ЖИЗНИ, НАУЧНОЙ И ПЕДАГОГИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

В середине 50-х годов на арену вышло новое поколение армянских критиков и литературоведов, которому предназначалась очень важная роль—вывести из застоя литературоведческую, а в известном смысле и всю обществоведческую мысль.

Эдвард Мкртычевич Джрбашян—один из представителей этого поколения, прошедший довольно трудный жизненный путь. Родился он в родовитой ванской семье Джрбашянов (давшей многих деятелей армянской науки и культуры), которая в тревожном 1915 г. вынуждена была покинуть Ван в надежде на скорое возвращение в родной город. Позднее, когда их надежды окончательно рухнули, Джрбашяны обосновались в Ереване. Традиционная любовь ванцев к книге, литературе, культуре играла в семье Джрбашянов большую роль и занимала особое место. В частности, мать будущего ученого прекрасно знала западноармянскую поэзию и эту свою любовь передала детям.

С началом Великой Отечественной войны выпускник средней школы Эд. Джрбашян призываются в армию. Он воевал на Северном Кавказе, на З-м Белорусском фронте, был награжден боевыми орденами и медалями. В октябре 1944 г. Эд. Джрбашян был тяжело ранен в Восточной Пруссии. После долгих месяцев лечения, уже после окончания войны, он возвращается домой. В 1950 г. Джрбашян заканчивает филологичес-

кий факультет Ереванского государственного университета и остается здесь на преподавательской работе. С тех пор его жизнь неразрывными узами связывается с этим крупнейшим очагом образования и науки—вот уже более четырех десятилетий он читает лекции студентам филологического факультета ЕГУ (теория литературы, эстетика, история новой армянской литературы, а на русском отделении—общий курс армянской литературы). Кроме того Эд. Джрбашян читал курсы армянской литературы в университетах Тбилиси, Киева, Вильнюса и Тарту.

Эд. Джрбашян работал также в периодической печати—был заместителем редактора газеты «Гракан терт», главным редактором журналов «Советакан граканутюн» и «Вестник Ереванского университета». Однако главным делом его жизни оставалась преподавательская и научно-исследовательская деятельность.

Именно в этих сферах академик Эдвард Джрбашян имеет огромные заслуги перед отечественной литературой и наукой. Его интересы охватывают различные ветви литературоведения. В исследовании истории литературы он больше всего увлекался литературным процессом конца XIX—начала XX века. Итогом его исследований в этой области явились главы V тома «Истории новой армянской литературы», в которых освещены культурная жизнь эпохи, многообразие литературных течений и стилей. Этот период истории армянской литературы, в силу своих особенностей и своеобразия, требует глубокого анализа—он отличается от классической картины литературного развития XIX века, здесь трудно обнаружить четкие границы литературных школ и стилей. Однако именно этой своей особенностью данный период становится притягательным для литературоведческой науки. Не случайно, что

расцвет новейшей армянской литературы, особенно поэзии, связывается с этим временем. Рассматривая литературу в широком контексте общественной мысли эпохи, Эд. Джрбашян выявил в своих трудах самобытные черты этого интереснейшего периода, впервые представив его полную и целостную картину, раскрыв ее смысл и сущность.

Дело было не только в многообразии стилей и школ. Это характерно, скажем, и для русской литературы. Армянская литература отличалась особой спецификой, которая с особенной остротой проявилась именно в упомянутый период. Эту особенность Джрбашян характеризует как своеобразную «запоздалость» в развитии, которая была обусловлена особыми чертами исторического развития народа (ситуация, на которую обратил внимание еще Ваан Терьян). Эд. Джрбашян во введении к V тому «Истории новой армянской литературы» и в разделе, посвященном литературной критике, фундаментально исследует это явление и связанные с ним литературно-художественные факты и реалии.

Ученый создал интересные труды, посвященные авторам начала века—Аветику Исаакяну, Ваану Терьяну, Мисаку Мецаренцу. Избегая внешних эффектов, быстротечных литературоведческих соблазнов, Эд. Джрбашян в лучших своих работах приходит к фундаментальным выводам, которые отныне трудно обойти. Достаточно упомянуть исследования, посвященные Ав. Исаакяну, в которых автор обращается к проблеме лирического героя, унаследованных поэтом художественных традиций и приверженности к романтическому методу.

Глубже и продолжительнее всего Эд. Джрбашян занимался исследованием творчества Ованеса Туманяна. Вершиной его научной деятельности является

исследование творческого наследия выдающегося поэта. Он издавал работы о Туманяне еще в студенческие годы. В 1964 г. была издана объемистая монография «Поэмы Туманяна» (явившаяся его докторской диссертацией). Этот труд выделяется во всем туманяноведении своим всесторонним и обстоятельным характером, точностью и обоснованностью выводов. Эд. Джрбашян в монографии выдвинул ряд проблем творчества великого поэта, впервые сделал предметом серьезного изучения важнейшие вопросы искусства слова Туманяна, создав тем самым основу дальнейшего исследования наследия писателя.

Целый ряд положений труда дают основания считать его поворотным явлением в туманяноведении. Это, прежде всего, относится к трактовке созданных Туманяном характеров. Для Эд. Джрбашяна это не просто жертвы патриархальной действительности (что являлось весьма распространенным мнением), а носители высоких нравственных ценностей и, естественно, в свете этой трактовки иной оттенок приобретают здесь оценка и понимание самой патриархальной действительности. Ануш и Саро не только жертвы этой действительности, но и порождение, результат ее. В качестве индивидуальностей они сформировались в патриархальной среде, и именно поэтому являются для Туманяна носителями идеалов—поэт противопоставлял их бесчеловечивающей буржуазной действительности, ценности которой он отвергал.

Вообще сама идея связи личности с народно-мирской стихией—одно из важнейших достижений данного труда Эд. Джрбашяна. Анализ этой связи открывал широкий путь для глубокого исследования творчества великого поэта.

В монографии «Поэмы Туманяна» Эд. Джрбашян выдвигает и другое важное положение—синтетизм ре-

ализма поэта. Так характеризует литературовед своеобразие художественного метода Туманяна, выделяя его тем самым из общего потока критического реализма XIX в. (хотя и сам он склонен, несмотря на особенности его метода, считать Туманяна представителем критического реализма в широком смысле этого слова). Не случайно книга «Поэмы Туманяна» впоследствии была переиздана с небольшими уточнениями.

В разные годы Эд. Джрбашян создавал исследования, посвященные различным проблемам и сторонам баллад, прозы, лирики Туманяна, которые были обобщены в книге «Туманян. Проблемы творчества». Перу Джрбашяна принадлежит и другая монография—«Туманян и традиции армянской литературы», вышедшая в свет в дни празднования 125-летия со дня рождения поэта. Этой книгой завершено осуществление замысла ученого по созданию своеобразной туманяновской трилогии, для которого потребовались усилия многих лет.

Следует сказать, что в армянском литературоведении такой длительный интерес к какому-то одному автору явление не столь уж и распространенное,—однако это очень характерно для стиля и мышления Эд. Джрбашяна. Примечательно, что и после третьей книги он не отказывается от Туманяна—недавно вышли в свет статьи, посвященные самым последним страницам творчества поэта, а также филологическим проблемам творчества Туманяна и Терьяна.

Эд. Джрбашян возглавляет работу по изданию нового академического собрания сочинений Ов. Туманяна, является составителем и автором комментариев ряда томов. В свое время (в начале 60-х гг.) при его непосредственном участии была основана серия изданий «Туманян. Исследования и публикации». Вышли в свет четыре книги этой серии, готова к изданию пятая, готовятся к изданию последующие книги. И сегодня

Джрбашян является одним из ответственных редакторов и самым активным автором серии.

Не следует, однако, забывать о том, что в сфере интересов Эд. Джрбашяна находятся и другие видные представители новой и новейшей армянской литературы. Необходимо упомянуть, к примеру, его исследования, посвященные М. Налбандяну, которые вышли отдельной книгой («Микаэл Налбандян и современность»). Особенно примечательны в ней по своим новым подходам разделы «Художественная система прозы Налбандяна» и «Великий искатель верного пути», в которых исследуются характерные черты личности великого писателя-публициста. Кроме того, одна из работ Эд. Джрбашяна посвящена всестороннему изучению «Песен патриарха» Гевонда Алишана и обнаружению их связей с европейским оссианизмом. Можно сказать, что небольшими и своеобразными монографиями являются исследования, посвященные рассказу Г. Сундукина «Варенькин вечер», стихотворению Е. Чаренца «К Армении», незавершенному роману А. Бакунца «Хачатур Абовян». Одна из лучших работ Эд. Джрбашяна называется «Четыре вершины» (она издана также на русском языке в Москве). Книга посвящена наследию Туманяна, Исаакяна, Терьяна и Чаренца.

Другой областью литературоведения, в которую Эд. Джрбашян внес большой вклад, является стихосложение. После известной работы М. Абегяна («Метрика армянского языка») вопросы метрики оказались вне поля зрения армянского литературоведения. Эд. Джрбашян возобновил интерес к этой совершенно самобытной области. По собственному же признанию, его интерес к метрике родился под влиянием труда М. Абегяна. Однако Джрбашян не стал слепым последователем крупнейшего филолога: он отверг его теорию

о силлабо-тонической природе армянской метрики и обосновал идею ее силлабичности. Его точки зрения на армянскую метрику изложены в исследовании «Язык и стих». После этой книги работы, посвященные метрике, создали литературоведы нового поколения. Сам Джрбашян и сегодня продолжает заниматься этой областью литературоведения. Среди его работ последних лет—исследования по метрике поэзии Терьяна и Туманяна. Его монография, освещая стих Терьяна («Система стихосложения Ваана Терьяна») вышла в свет в 1995 г. Это первое в армянском литературоведении исследование, посвященное целостному анализу системы стихосложения одного поэта.

Эд. Джрбашян—один из немногих литературоведов, проявляющих особый интерес к проблемам теории литературы. В университете он долгие годы читал общий и специальные теоретические курсы, основал кафедру теории литературы и эстетики (впоследствии —теории литературы и зарубежной литературы). До этого Эд. Джрбашян создал в Институте литературы отдел теории литературы и несколько лет возглавлял его. Он является автором первого армянского вузовского учебника «Теория литературы», отличающегося богатством литературно-теоретической мысли. Заметим, что с 1961 по 1980 гг. эта книга выдержала пять изданий. В последние годы ученый написал также школьный учебник «Литературоведение. Теоретический курс».

Теоретические интересы Эд. Джрбашяна не исчерпываются указанными трудами. В множестве изданных им монографий и сборников статей затрагиваются разнообразные теоретико-литературоисследовательские вопросы. В этом смысле особенно выделяются сборники «Вопросы поэтики» и «Эстетика и литература», в которых изучены вопросы литературных методов, жанров,

стихосложения и другие вопросы. Проблемы истории литературы Джрбашян видит глазами и теоретика литературы. Характерно, что творчество Туманяна, как уже упоминалось, он исследовал по жанрам (поэмы, баллады, проза). А первое объемистое исследование автора также связано с жанром—«Жанр поэмы в армянской советской литературе».

Преимущественно в теоретико-типологическом плане исследовал ученый также и проблемы литературных связей и соотнесений, которые всегда оставались в сфере его научных интересов и предпочтений. Этой проблематике посвящены его исследования таких параллелей, как Пушкин—Туманян, Пушкин—Чаренц, Лермонтов—Терьян, европейский романтизм—Исаакян и др. По его инициативе начались исследования в направлении освещения историко-функциональной роли армянской литературы, результатом чего явился изданный в 1989 г. сборник—под его редакцией и с его вступительной статьей.

Эд. Джрбашян следует за традиционными направлениями литературоведения. Многое дали ему крупнейшие представители русского литературоведения и филологии—В. Жирмунский, Б. Томашевский, Г. Гуковский, Д. Лихачев, Л. Тимофеев и др. Он всесторонне знает армянское литературоведение, продолжая и развивая его лучшие традиции. В студенческие годы произвели на него глубокое впечатление лекции по новой армянской литературе Арсена Тертеряна и Мкртича Мкряна, о которых он постоянно вспоминает с чувством благодарности и признательности.

Работы, посвященные локальным проблемам литературоведения (например, стихосложения) составляют важную часть научных заслуг Джрбашяна. Однако сущность его литературоведческого взгляда на вещи обусловлена и зиждется на основополагающей

концепции связи литературы с жизнью, общественной ценности и обусловленности литературы. В этом смысле характерны названия двух его книг—«Мировоззрение и мастерство» и «Писатель и народ». Эд. Джрбашян обладает одной особенностью, которая очень важна и в науке, и в общественной жизни, и в человеческих отношениях—он человек и ученый с устойчивыми принципами и убеждениями. Несомненно, с годами в его представлениях и восприятиях многое откорректировалось и пережило развитие, однако от главных своих идей он никогда не отказывался.

И, наконец, Эд. Джрбашян является одним из лучших организаторов науки в республике. В 1977 г. он назначается директором Института литературы им. М. Абегяна Академии наук Армении. В прошедшие почти два десятилетия в институте создано множество работ по самым различным проблемам истории армянской литературы, изданы собрания сочинений и однотомники классиков. Институт, преодолевая самые различные трудности, вносит свой большой вклад в дело изучения духовных ценностей нашего народа. Эд. Джрбашян продолжает активную научно-исследовательскую работу, вместе с тем он искусно и умело направляет работу всего научного персонала института, в котором трудятся ученые, имеющие серьезные научные заслуги.

Эд. Джрбашян множество раз представлял армянское литературоведение на международных научных конференциях, выступал с докладами в Институте мировой литературы им. А. М. Горького (Москва), в Институте русской литературы (Пушкинский дом, Санкт-Петербург), на IX конгрессе Международной ассоциации сравнительного литературоведения (Австрия, 1979), на III конференции Международного арmeno-

ведческого общества (Швейцария, 1988) и т. д. Большие усилия приложил он в деле созыва Международной научной конференции, посвященной средневековой армянской литературе (Ереван, 1986).

Можно не принимать или оспаривать ту или иную его точку зрения. Но это никогда не вызывает сложностей в человеческих отношениях. Эта черта, не очень часто встречающаяся в руководителях больших научных коллективов, облегчает его отношения и с молодежью. Студенты хранят об Эд. Джрбашяне самые теплые воспоминания. Он был научным руководителем многих диссертационных работ, оппонентом на защите диссертаций, в той или иной форме способствовал вступлению их авторов в науку.

В последние годы Эдвард Мкртычевич Джрбашян продолжает работать с прежним завидным самозабвением, преподнося читателю одну за другой все новые и новые работы. Подлинная преданность армянской литературе и литературоведению,—пожалуй, это и есть верная и поистине справедливая оценка и характеристика пройденного им пути.

Доктор филологических наук
